



Հայաստանի Հանրապետության
փաստաբանական դպրոցի 90 շրջանավարտ 2021թ-ի
դեկտեմբերի 6-ին ստացան փաստաբանական
գործունեության արտոնագրեր:

Ողջույնի խոսքում Փաստաբանների պալատի
նախագահ Սիմոն Բաբայանը նախ շնորհավորեց ՀՀ
բոլոր փաստաբաններին մասնագիտական տոնի
առթիվ:

«103 տարի հայաստանյան փաստաբանությունը
պայքարում է հանուն արդարադատության: Այսօր,
վստահաբար կարող ենք ասել, որ ունենք կայացած,
անկախ և միասնական ինստիտուտ: Հանդիսանալով
քաղաքացիական հասարակության պարտադիր տարր
հայաստանյան փաստաբանությունը իր ուրույն տեղն
է զբաղեցնում երկրի իրավական համակարգում:
Այս կարգավիճակը բոլորիս՝ սեփական
մասնագիտական առաքելության նկատմամբ
պատասխանատու վերաբերմունքի արդյունք է», -իր
խոսքում նշեց Սիմոն Բաբայանը:

Սիմոն Բաբայանը նաև շնորհակալություն
հայտնեց փաստաբանական դպրոցի տնօրենին և ողջ
աշխատակազմին՝ ունկընդիրների
ուսումնառությունը բարձր մակարդակով և պատշաճ
որակով կազմակերպելու համար:

Փաստաբաններին շնորհավորեց նաև ՀՀ
փաստաբանական դպրոցի տնօրեն Արա
Ջոհրաբյանը, նշելով, որ իր պատկերացմամբ
փաստաբանի հավաքական կերպարի կարևորագույն
հատկանիշները՝ խոհեմությունը, արդարությունը,
արիությունը, չափավորությունը, անկախությունը,
ինչպես նաև սերն է մարդկանց հանդեպ, որոնցով
փաստաբանը պետք է առաջնորդվի իր
գործունեության ընթացքում:

Ողջույնի և շնորհավորանքի խոսքերով հանդես
եկան նաև ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
անդամներ Կարեն Մեժլումյանը, Մարինե
Ֆարմանյանը և Գայանե Դեմիրջյանը:
Ելույթներով հանդես եկան նաև Փաստաբանական
դպրոցի շրջանավարտներ՝ Ստելլա Սայադխանյանը և
Գայանե Գևորգյանը: Նրանք իրենց խոսքում
շնորհակալություն հայտնեցին Փաստաբանական
դպրոցի դասախոսական կազմին և աշխատակազմին
ուսումնառության գործընթացը պատշաճ որակով
կազմակերպելու համար:

Ելույթներին հաջորդեցին փաստաբանների

հանդիսավոր երդման և արտոնագրերի հանձնման
արարողությունները:



```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```